

DOI: 10.59560/18291155-2024.1-19

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ԶԱՎԵՆ ՍՄԲԱՏՅԱՆ

Հայաստանի եվրոպական համալսարանի հայցորդ,
Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
իրավաբանական վարչության վարչական
իրավախախտումների վերաբերյալ
գործերի քննության բաժնի պետ

**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱԿԱԻՐԱՎԱԿԱՆ
ՎԱՐՔԱԳԾԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ ԵՎ ԴՐԱ
ԸՆԿԱԼՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ամփոփագիր

Հոդվածում քննարկվում են վարչական իրավախախտման՝ որպես հակաիրավական վարքագծի դրսևորման արդյունքի և դրա ընկալման հիմնախնդիրները:

Վերոգրյալի հաշվառմամբ հետազոտության շրջանակներում ուսումնասիրության առարկա են հանդիսանում հետազոտության բովանդակությանն առնչվող տարբեր երկրների իրավական ակտերը, իրավական դոկտրինան և դրանց կիրառման դատական պրակտիկան:

Սույն հոդվածի նպատակն իրավական հետազոտության հիման վրա, վարչական պատասխանատվության ոլորտում անմեղության կանխավարկածի ինստիտուտի, վարչական իրավախախտման հասկացության, վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի, վարչական իրավախախտման և վարչական պատասխանատվության ինստիտուտների շղթայական կապի վերաբերյալ միասնական դատողությունների ամրագրումն է, ինչպես նաև տեսական և գործնական փորձի հիման վրա առավել արդյունավետ և հատկանշական կարգավորումների խարսխումը Հայաստանի Հանրապետության օրենսդրական կարգավորումների համակարգում:

19 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 1(113)2024

Հոդվածում քննարկվում են այնպիսի հարցեր, որոնք այս կամ այն չափով արտացոլում են ստացել տարբեր հեղինակների աշխատություններում, սակայն թեմայի բովանդակությունը կազմող ինստիտուտի շուրջ ծառայող հիմնախնդիրներն առանձին համալիր գիտական քննարկման ու իրավական վերլուծության առարկա չեն եղել, ինչն արվել է սույն աշխատանքում:

Սույն աշխատանքը հանդիսանում է վարչական իրավախախտման ոլորտում առկա կանոնակարգումների համակարգային և տարածական հետազոտություն, որով առավել մանրամասն և ամբողջական հետազոտվում է վարչական իրավախախտման ինստիտուտը, դրա հարաբերակցությունը հանցանքի հետ, հանցանքի և զանցանքի սահմանային հարաբերակցությունը, վարչական պատասխանատվությունը որպես վարչական իրավախախտման հետևանք և դրանց շղթայական կապը, վարչական ակտի իրավաչափության կանխավարկածը՝ որպես շարունակվող իրավախախտման համար վարչական պատասխանատվության կիրառման նախապայման:

Հիմնաբառեր. վարչական իրավախախտում, վարչական պատասխանատվություն, զանցանք, անմեղության կանխավարկած, հանցանք, անօրինականություն, նորմ:

Ներածություն

Հակաիրավական վարքագծի դրսևորման դեպքերին արագ և արդյունավետ հակազդելը հանդիսանում է օրինականության և իրավունքի գերակայության սահմանադրական սկզբունքների երաշխավորման կարևորագույն պայմաններից մեկը, որի միջոցով կանոնակարգվում է նաև համակեցության կանոնները պահպանելու բարձր նպատակը:

Վարչական իրավախախտումը և վարչական պատասխանատվությունը միմյանց սերտ կապված ինստիտուտներ են, որոնք հանդիսանում են մեկ միասնական համակարգի հաջորդական օղակները՝ դրսևորվելով հետևանքի կամ պատճառի ձևով: Այսպես, վարչական իրավախախտումը՝ որպես հանրային վտանգավոր արարք, թեև ունի առավել նվազ վտանգավորության մակարդակ, քան հանցանքն է, այնուամենայնիվ, իր ծավալով ավելի շատ հասարակական հարաբերություններ է ընդգրկում և շոշափում: Իսկ վարչական պատասխանատվության սահմանման խնդիրներն արդիական են բոլոր պետությունների համար, քանի որ դրանք դիտարկվում են որպես պետական կառավարման արդյունավետ լծակ:

Սույն աշխատանքի նպատակն իրավական հետազոտության հիման վրա, վարչական պատասխանատվության ոլորտում անմեղության կան-

ՍԱՀՄԱՆԱՂՈՒՄԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ 1(113)2024

խավարկածի ինստիտուտի, վարչական իրավախախտման հասկացության, վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի, վարչական իրավախախտման և վարչական պատասխանատվության ինստիտուտների փոխկապվածության վերաբերյալ միասնական դատողությունների ամրագրումն է, ինչպես նաև տեսական և գործնական փորձի հիման վրա առավել արդյունավետ և հատկանշական կարգավորումների խարսխումը ՀՀ գործող օրենսդրական դաշտում: Ընդ որում, վարչական իրավախախտման ինստիտուտին նվիրված հիմնախնդիրների հետազոտությունը պատկերացումներ է տալիս հանրային իշխանության գործունեության բարելավման վերաբերյալ՝ բացահայտելով լավագույն փորձն ու կիրառական նշանակությունը. քաղաքականությունը մշակողները կարող են նպատակաուղղված միջամտություններ իրականացնել՝ բարձրացնելու վարչական պատասխանատվության արդյունավետությունը: Նշվածով պայմանավորված՝ աշխատանքով առաջադրված նպատակներն ու խնդիրներն ունեն խիստ արդի և հրատապ կարևորություն:

Դեռևս Խորհրդային շրջանից քաղաքացու իրավական առօրյայում անհամեմատ մեծ գործնական նշանակություն ուներ վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցի կիրառման ընթացակարգը: Ընդ որում, ուշադրությունն այնքան էր սևեռված դրա վրա, որ «վարչական իրավունք» հասկացությունն ընդհանրապես նույնացվել էր «վարչական իրավախախտում» հասկացության հետ: Դա մեծ թյուրիմացություն էր, քանի որ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությունը և վարչական վարույթը կարգավորման բոլորովին տարբեր առարկաներ ունեն և ըստ այդմ էլ՝ բոլորովին տարբեր գործառույթներ են կատարում: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը կարգավորում է այն դեպքերը, երբ խախտված են լինում վարչական օրենսդրության ինչ-ինչ դրույթներ, և հատուկ վարույթում խախտողները պետական մարմինների կողմից ենթարկվում են սանկցիաների, որոնք սահմանված են համապատասխան իրավական ակտում: Հետևաբար, վարչական իրավախախտումների վերաբերյալ իրավունքն իր էությամբ մոտենում է քրեական իրավունքին: Այս երկու ոլորտներում էլ պետությունը սանկցիաներ է կիրառում¹:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 9-րդ հոդվածը վարչական իրավախախտման հասկացությունը սահմանում է որպես պետական կամ հասարակական կարգի, պետության անվտանգության

¹ Տե՛ս Թովմասյան Հ., Լուխթերհանդթ Օ., Մուրադյան Գ., Պողոսյան Վ., Ռայմերս Վ., Ռուբել Ռ., ՀՀ ընդհանուր վարչական իրավունք: Երևան, «Բավիդ», 2011 թ., էջեր 36-37:

ապահովման, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողություն կամ անգործություն, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության «Վարչական իրավախախտումների մասին» օրենքի (ընդունվել է 1968 թվականի մայիսի 24-ին) 1-ին հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը հակաիրավական արարք է, որի կատարման մեջ կան օրենքով նախատեսված հիմքեր, որը թույլ է տալիս տուգանքի տեսքով պատիժ սահմանել: Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ արարքը կարող է պատժվել որպես վարչական իրավախախտում միայն այն դեպքում, երբ պատժի հնարավորությունը սահմանված է օրենքով և մինչև արարքի կատարումը:

Ռուսաստանի Դաշնության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 2.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումը ֆիզիկական կամ իրավաբանական անձի ապօրինի, մեղավոր գործողությունն է (անգործությունը), որի համար վարչական պատասխանատվություն է սահմանված նույն օրենսգրքով կամ Ռուսաստանի Դաշնության օրենքով սահմանված սուբյեկտների կողմից ընդունված իրավական ակտերով:

Ըստ տեսաբան Կուտաֆինի՝ վարչական իրավախախտումը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով՝ սոցիալական վտանգ (վնասակարություն), անօրինականություն, մեղավորություն, պատժելիություն¹:

Մեկնաբանելով վերոգրյալ հասկացությունները՝ առանձնացնենք արարքը որպես վարչական իրավախախտում որակելու ընդհանրական հատկանիշները:

Վարչական իրավախախտման առաջին հատկանիշն արարքի **անօրինականությունն** է: Անօրինական արարքը կարող է արտահայտվել ինչպես գործողության (ակտիվ վարք), այնպես էլ անգործության (պասիվ վարք) տեսքով: Առաջին դեպքում անձը կատարում է համապատասխան նորմատիվ իրավական ակտով նախատեսված արգելված գործողություն, իսկ երկրորդում անձը չի կատարում օրենքով կամ այլ կարգավորող իրավական ակտերով սահմանված պարտադիր գործողություններ: Հիշյալ նշանը մի կողմից նշանակում է, որ ֆիզիկական կամ իրավաբանական անձը կատարում է այնպիսի գործողություններ, որոնք խախտում են

¹ Ст'ю Административная ответственность: Учебное пособие. – Оренбург: Оренбургский институт (филиал) Университета имени О.Е. Кутафина (МГЮА), 2018, էջ 13:

վարչական կամ իրավունքի այլ ճյուղերի նորմերը, օրինակ, սահմանադրական, քաղաքացիական, աշխատանքային, բնապահպանական, հարկային, բանկային, բյուջետային, մաքսային և այլն, իսկ մյուս կողմից՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձը չի կատարում վարչական և իրավունքի այլ ճյուղերի նորմերով սահմանված գործողությունները:

Վարչական իրավախախտումների առանձնահատկությունը կայանում է նաև նրանում, որ այդ բնույթի իրավախախտումների կազմը կարգավորող վարչական և իրավական նորմերի դիսպոզիցիաների մեծ մասը ընդհանրական է և չի պարունակում արարքի ողջ էությունը: Օրինակ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 41-րդ հոդվածի կարգավորումների համատեքստում՝ աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների խախտման դեպքում վարչաիրավական այդ արարքի էությունը կարող է բացահայտվել նույն աշխատանքային օրենսդրությամբ սահմանված որոշակի պահանջների կատարման տեսանկյունից: Այսինքն՝ վարչական և իրավական արգելքները կարող են ամրագրվել օրենքներում և դրանց համապատասխան ընդունված նորմատիվ իրավական ակտերում, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում իրավախախտումների կազմերի անունները ձևակերպվում են որպես օրենսդրության, պահանջների, կանոնների, ստանդարտների, նորմերի, պայմանների, կարգի խախտում:

Անհարժեշտ է կարևորել, որ վարչական իրավախախտումների ցանկը սահմանվում է միայն օրենքով. դրանք բնութագրվում են որպես ապօրինի գործողություններ, ինչպես նաև ցույց են տալիս վարչական պատասխանատվության ենթարկվելիս օրենքի և իրավունքի անալոգիայի կիրառման անթույլատրելիությունը: Ֆիզիկական կամ իրավաբանական անձը վարչական պատիժ կրի, եթե ապացուցվի, որ նրանց գործողությունը կամ անգործությունն առաջացրել է օրենսդիր կամ գործադիր իշխանության իրավասու մարմնի կողմից սահմանված կարգի խախտում, որը երաշխավորված է վարչական պատասխանատվության միջոցներով:

Վարչական իրավախախտման հաջորդ հատկանիշը **պատժելիությունն է**, որի էական առանձնահատկությունը պայմանավորված է վարչական պատժի կիրառման անխուսափելիությամբ: Այսինքն, իրավասու պաշտոնատար անձի կողմից իրավախախտողի նկատմամբ վարչական պատիժ կիրառվում է վերջինիս կողմից որոշակի գործողության (անգործության) համար, որը Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ ճանաչվում է որպես վարչական իրավա-

խախտում և որի կատարման համար նույն օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Վարչական իրավախախտման մյուս հատկանիշը **մեղավորությունն** է: Այն հանդիսանում է վարչական պատասխանատվության առաջացման նախապայման: Վարչական իրավախախտում կարող է որակվել միայն մեղավոր արարքը (կամ անգործությունը), երբ մեղքի բացակայությունը բացառում է արարքը վարչական իրավախախտում ճանաչելը, անգամ դրա ձևական անօրինականության դեպքում: Այդ դեպքում բացառվում է նաև դրա կատարման համար վարչական պատասխանատվությունը:

Ազգային իրավական համակարգում, հատկապես նրա իրավունքի այն ճյուղերում, որոնք ամրագրում են պատժիչ մեխանիզմներ, գործում է անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ իր կիրառելիության առանձնահատկություններով: Ի տարբերություն քրեական պատասխանատվության գործընթացի՝ վարչական իրավախախտումների համար պատասխանատվություն նախատեսող իրավական ակտերում բացակայում է անմեղության կանխավարկածի սկզբունքի ուղղակի սահմանումը:

ՀՀ Սահմանադրության «Անմեղության կանխավարկածը» վերտառությամբ 66-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ անմեղության կանխավարկածը դիտարկվում է հանցագործության մեջ մեղադրվող անձի իրավունքների պաշտպանության երաշխիք, և որևէ ձևով խոսք չի գնում վարչական զանցանքի կատարման վիճակում նույնաբովանդակ դրսևորման մասին:

Համաձայնվելով հայ իրավագետների այն մոտեցման հետ, որ անմեղության կանխավարկածը հանդիսանում է իրավական ու ժողովրդավարական պետության իրավական համակարգի կարևորագույն որակական ցուցանիշներից մեկը և գործում է հանրային պատասխանատվության ոլորտում¹, անհրաժեշտ է կարևորել վարչական պատասխանատվության ոլորտում անմեղության կանխավարկածի կիրառելիությունն ու դրա նշանակությունը: Այսպես, ՀՀ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով այս հիմնախնդրին, արձանագրել է, որ. «անմեղության կանխավարկածի սկզբունքը կիրառելի է ոչ միայն ներպետական օրենսդրությանը համապատասխան որպես քրեական հանցանք որակված արարքների առնչությամբ հարուցված վարույթների նկատմամբ, այլև, պայմանավորված տվյալ արարքի բնույթով և նախատեսված պատասխանատվության տեսակներով ու խստությամբ՝

¹ Տե՛ս Պետության և իրավունքի տեսություն: Հեղ. խումբ: Գիտ. խմբ՝ **Ղամբարյան Ա, Մուրադյան Մ.**: Երևան, «Լուսաբաց» հրատարակչություն, 2014, էջ 605:

կարող են կիրառվել նաև վարչական և կարգապահական պատասխանատվության վարույթների նկատմամբ»¹:

Վերոգրյալի տրամաբանության ներքո մեկնաբանելով վարչական պատասխանատվության ոլորտում առկա իրավակարգավորումները՝ կարելի է արձանագրել, որ թեև անմեղության կանխավարկածի սկզբունքն ուղղակի նախատեսված չէ այս ոլորտում, սակայն այն ունի իր իրավական ազդեցությունն այլ իրավական նորմերի և դրանց համակարգային մեկնաբանման վրա: Ասվածի համատեքստում, օրինակ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածով սահմանված այն դրույթը, ըստ որի՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում, կամ, օրինակ, ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածով սահմանված այն դրույթը, ըստ որի՝ վիճարկման հայցով ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը, որն ընդունել է միջամտող վարչական ակտը՝ դրա համար հիմք ծառայած փաստերի մասով: Նշվածից բխում է այն դատողությունը, ըստ որի՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնող մարմինը (պաշտոնատար անձը) պետք է ապացուցի անձի մեղքը: Նշենք միայն, որ Վարչական դատավարության օրենսգիրքը թույլ է տալիս բացառություններ անմեղության կանխավարկածի սկզբունքից՝ սահմանելով պատասխանատվության միջոցի կիրառում կոնկրետ իրավունքով պայմանավորված, օրինակ, տրանսպորտային միջոցների սեփականատերերի նկատմամբ:

Կարևոր է արձանագրել, որ թեպետ իրավանորմերի մեկնաբանումը հանգում է այն դատողությանը, ըստ որի՝ նախքան վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտի կայացումը և դրա ուժի մեջ մտնելն անձը համարվում է վարչական պատասխանատվության չենթարկված, սակայն այն հղի է իրավական երկակիությանը և կարող է հանգեցնել տարաբնույթ մեկնաբանության, որպիսի պայմաններում և այդ խնդրի հաղթահարման համար գործող օրենսդրությամբ անհրաժեշտ է սահմանել վարչական պատասխանատվության պարագայում անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ ընդգծելով դրա կիրառման շրջանակը:

Հատկապես կարևոր է այն նախապայմանը, թե մինչև երբ է անձը համարվում վարչական պատասխանատվության չենթարկված:

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 22.09.2009 թվականի թիվ ՍԴԴ-832 որոշումը:

Վերոգրյալից ելնելով՝ անհրաժեշտ է հարցը քննարկել նաև վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի լույսի ներքո, ըստ որի՝ վարչական ակտն իրավաչափ է, քանի դեռ օրենքով սահմանված կարգով չի ճանաչվել ոչ իրավաչափ կամ անվավեր¹:

Իրավագիտությունը որպես վարչական իրավունքի սկզբունք ճանաչում է վարչական ակտի օրինականության կանխավարկածը²:

Վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից դառնում է իրավական կարգի մաս և պարտադիր է դառնում ինչպես պաշտոնատար անձանց, այնպես էլ վարչակազմի համար:

Ինչպես շատ իրավական սկզբունքներ, դրա արմատները գալիս են Լատինական արտահայտությունից «omnia praesumuntur rite et solemniter esse acta, donec probetur in contrarium», որը նշանակում է. «Ենթադրվում է, որ բոլոր գործողությունները ճիշտ են կատարվել, քանի դեռ հակառակն ապացուցված չէ»:

Օրինակ, Իսպանիայի Թագավորության «Պետական կառավարման մարմինների ընդհանուր վարչական վարույթների մասին» օրենքը սահմանում է՝ վարչական ակտն ունի լեգիտիմության կանխավարկած՝ որպես վարչական իրավունքի սկզբունք³:

Չնայած այն հանգամանքին, որ նման բովանդակության կամ նշանակության նորմեր ՀՀ գործող օրենսդրության մեջ բացակայում են, այդուհանդերձ, օրենսդրական կարգավորումների առկա կառուցակարգերի բովանդակությունից կարելի է եզրահանգել վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի մասին:

Այսպես, ներկայացվածի հաշվառմամբ և առաջնորդվելով այն կանխավարկածով, որ վարչական ակտն իրավաչափ է այնքան ժամանակ, քանի դեռ ունի իրավական ուժ և ոչ իրավաչափ ճանաչված չէ՝ հարկ է արձանագրել, որ վարչական պատասխանատվության շրջանակում անմեղության կանխավարկածի ինստիտուտն անհրաժեշտ է կապել ոչ թե պատիժ սահմանող վարչական ակտի անբողոքարկելիության հետ, այլ վարչական ակտի իրավաբանական ուժ ստանալու հետ:

Նման իրավիճակում կարելի է բանաձևել, որ վարչական պատասխանատվության ոլորտում անձը համարվում է անմեղ, քանի դեռ վերջի-

¹ Տե՛ս **Սմբատյան Զ.** Վարչական ակտի արդյունավետության գնահատման տեսական և գործնական վերլուծություն: Եր., 2023, էջ 105:
² Տե՛ս Augusto Durán Martínez La presunción de legitimidad del acto administrativo. Un mito innecesario y pernicioso universidad católica 2007, 121 էջ:
³ Տե՛ս Art. 37 (2), 47 The Common Administrative Procedure of the Public Administrations: Law 39. 2015, October 1. URL: <https://afyonluoglu.org/PublicWebFiles/Reports/PDP/2015%20Spain-Law%2039-2015%20Common%20Administrative%20Procedure%20of%20PA.pdf>

նիս մեղքը չի հաստատվել ուժի մեջ մտած «վարչական տույժ նշանակելու մասին» վարչական ակտով:

Եթե հիշյալ սկզբունքը կապվի ոչ թե վարչական ակտի ուժի մեջ մտնելու ինստիտուտի, այլ անբողոքարկելիության ինստիտուտի հետ, կխաթարվի վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի սկզբունքի բուն էությունը և գործնականում կհանգեցնի իրավական լուրջ խնդիրների: Նման իրավիճակում այն իրավախախտումների դեպքում, որոնց շարունակությունը նախատեսված է, որպես առավել խիստ պատժի ենթակա արարք չի կարող կիրառվել, քանի որ առաջին վարչական ակտը բողոքարկելով՝ անձը դեռևս չի համարվի վարչական պատասխանատվության ենթարկված, ինչը կխանգարի իրավախախտումներին արագ հակազդելուն:

Օրինակ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասը վարչական պատասխանատվություն է նախատեսում, ըստ էության, ինքնակամ շինարարական աշխատանքներ իրականացնելու համար, իսկ նույն հոդվածի 4-րդ մասը վարչական պատասխանատվություն է նախատեսում նույն արարքը 1-ին մասով վարչական տույժ նշանակելու օրվանից հետո շարունակելու համար: Նման իրավիճակում, եթե անմեղության կանխավարկածը կապենք ոչ թե վարչական ակտի ուժի մեջ մտնելու, այլ վարչական ակտի անբողոքարկելիության հետ, ապա կստացվի, որ անձը դատական կարգով առաջին վարչական ակտը բողոքարկելու դեպքում կխուսափի իրավախախտումը շարունակելու համար առաջ եկող բացասական հետևանքներից, քանի որ եթե վերջինս առաջին վարչական ակտով դեռևս չի համարվում վարչական պատասխանատվության ենթարկված, ապա բացակայում է 4-րդ մասով սահմանված առավել խիստ պատժամիջոցի կիրառման հիմքը, ինչը և հակասում է թե՛ իրավական տրամաբանությանը, թե՛ վարչական պատասխանատվության բուն նպատակին:

Վարչական իրավախախտման հաջորդ հատկանիշն արարքի **հանրային վտանգավորությունն է**: Նշված հատկանիշը նյութական է և թույլ է տալիս տարբերակել վարչական իրավախախտումները հանցագործություններից:

Ըստ էության, վարչական իրավախախտումը հասարակության համար վնասակար (վտանգավոր) արարք է: Վարչական իրավախախտումը հասարակության համար անցանկալի երևույթ է, քանի որ խախտում է հասարակության համար հաճելի, շահավետ և իրավունքի նորմերով պահպանվող հասարակական հարաբերությունները: Վարչական իրավախախտումների անցանկալի բնույթը հասարակության համար և դրանց

վնասակարությունը ճանաչվում են բոլոր գիտնականների կողմից, ովքեր այս կամ այն կերպ անդրադարձել են զանցանքի սոցիալական բնույթը որոշելու խնդրին:

Այնուամենայնիվ, այն հարցին, թե որն է այս անցանկալի երևույթի էությունը, տարբեր իրավագետներ տարբեր կերպ են պատասխանում: Վարչական իրավախախտման սոցիալ-իրավական էության վերաբերյալ տեսական մոտեցումները կարող են ընդհանրացվել երկու հիմնական տեսակետների առկայությամբ: Դրանցից առաջինի համաձայն՝ վարչական իրավախախտումը հասարակության համար անցանկալի է այն պատճառով, որ դա սոցիալապես վտանգավոր արարք է, որը ոտնձգություն է կատարում իրավունքի նորմերով պաշտպանված հասարակական հարաբերությունների վրա:

Երկրորդ տեսակետի ներկայացուցիչները չեն ճանաչում վարչական զանցանքները որպես սոցիալապես վտանգավոր արարքներ: Նրանց կարծիքով՝ իրավական պայքարը նրանց դեմ է, քանի որ զանցանքները պարունակում են հասարակության շահերին վնաս հասցնելու պոտենցիալ հնարավորություն: Վարչական իրավախախտմանը բնորոշ է բոլոր իրավախախտումների համար ընդհանուր օբյեկտիվ որակը՝ «անօրինականությունը», քանի որ այն արտահայտվում է գործողության կամ անգործության մեջ, որը հակասում է պետության կողմից սահմանված ընդհանուր պարտադիր վարչական և իրավական այլ նորմերի պահանջներին՝ պետական կառավարման գործընթացում հարաբերությունները կարգավորելու համար: Վարչական իրավախախտումը բնութագրվում է այն փաստով, որ վարչական իրավախախտումը, որպես կանոն, տեղի է ունենում այն ժամանակ, երբ պետական կառուցակարգերն առավել նվազ պաշտպանվածության մակարդակ ունեն: Վարչական իրավախախտման անօրինականությունը դրա վնասակարության իրավական արտահայտությունն է: Այս երկու հատկանիշներն էլ բնութագրում են վարչական իրավախախտման նյութական էությունը: Լինելով հակասոցիալական արարք՝ վարչական իրավախախտումը զուրկ է հասարակական բնույթից, ինչը որակապես տարբերակում է այն հանցագործությունից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության զարգացման միտումը ցույց է տալիս, որ վարչական իրավախախտումների համար պատժամիջոցները խստացվում են, ինչը նպաստում է վարչական իրավախախտումների և քրեական հանցագործությունների համար հասարակական վտանգի ընկալման սահմանների քայքայմանը, ինչպես նաև այն այսպես կոչված «նվազ քրեական իրավունք» ստեղծելու

ՍԱՀՄԱՆԱՂՈՒՄՆԵՐԻ ՂԱՏԱՐՈՒՄ 1(113)2024

անհրաժեշտության վերաբերյալ տեսակետների առաջացմանը, երբ հանցագործություններին նման վարչական իրավախախտումները կդիտարկվեն որպես քրեական հանցագործություններ, որոնք չեն ենթադրում քրեական պատասխանատվություն: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության զարգացման միտումը ցույց է տալիս, որ եվրոպական երկրներում վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությունը ոչ պակաս պատվավոր տեղ է գրավում, թեև դրա նկատմամբ մոտեցումը նկատելիորեն տարբերվում է: Այնպիսի պետություններում, ինչպիսիք են Գերմանիան, Իտալիան, վարչական իրավախախտումների մասին օրենքները համարվում են ոչ թե որպես անկախ ազդեցություն ունեցող (ինչպես Ռուսաստանում կամ Հայաստանում), այլ որպես քրեական օրենսդրության բաղկացուցիչ մաս: Գերմանիայում հասարակական կարգի իրավախախտումը համարվում է «փոքր քրեական իրավունք» և վերաբերում է ընդհանուր դատարանների իրավասությանը¹: Դա հիմնականում պայմանավորված է պատմական գործոններով: XX դարում բոլոր տեսակի իրավախախտումները եվրոպական պետություններում դիտարկվում էին բացառապես քրեական իրավունքի շրջանակներում, և միայն վերջերս, տնտեսության զարգացման, իրավական համակարգի պատճառով, դրանց համար պատասխանատվությունը սկսեց նշանակվել ոչ թե դատական մարմինների, այլ վարչական մարմինների կողմից: Հետևաբար գոյություն ունեն տարբերություններ «վարչական իրավախախտում» տերմինի ընկալման մեջ: Հարկ է արձանագրել, որ քրեական հանցագործությունների հետ ընդհանուր առարկա ունեցող վարչական իրավախախտումների կազմերի վերանայումը թույլ կտա դրանք վերանայել և վերագրել քրեական իրավունքին՝ որպես հանցագործություն, որը չի առաջացնում խիստ պատասխանատվություն: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում անհրաժեշտ է ամրագրել հենց այն վարչական իրավախախտումները, որոնք ոտնձգություն են կատարում կառավարման սահմանված կարգի վրա: Դիտարկված հատկանիշները վարչական իրավախախտումը բնութագրում են որպես սոցիալապես վնասակար արարք, իրականության երևույթ: Վարչական իրավախախտումը բնութագրվում է նրանով, որ այս կատեգորիան կոնկրետացվում է վարչական իրավախախտումների մասին օրենսդրության մեջ՝ իրավախախտումների հատուկ կազմերի տեսքով:

¹ Ст'ю Пуделька Йорг. Сравнительный анализ гражданско-процессуального и административно-процессуального права // Ежегодник публичного права – 2014. Административное право: сравнительно-правовые подходы. - М., 2014, էջ 340:

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1(113)2024

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԵՂԵԿՎՈՐ

Ավանդաբար, վարչական իրավունքի տեսության մեջ վարչական իրավախախտման իրավական կազմը հասկացվում է որպես օրենքով սահմանված տարրերի պարտադիր շարք և արարքը բնութագրում է որպես վարչական իրավախախտում: Զանցանքի իրավական կազմն ունի որոշակի համակարգ և դրա բոլոր տարրերը փոխկապակցված են: Կազմի բոլոր տարրերի առկայությունը պարտադիր է որոշակի արարքը որպես վարչական իրավախախտում որակելու համար: Եթե նրանցից առնվազն մեկը բացակայում է, կամ ինչպես շեշտում է պրոֆեսոր Ի.Ա. Գալազան՝ չի համապատասխանում այն հատկություններին, որոնք նախատեսված են օրենքի համապատասխան նորմով, ապա նշված արարքն ընդհանրապես վարչական իրավախախտում չէ, կամ այդ արարքում կա մեկ այլ իրավախախտման կազմ, որը նախատեսված է օրենքի մեկ այլ նորմով: Այսպիսով՝ վարչական իրավախախտման կազմի ըմբռնումը կարևոր է վարչական պատասխանատվություն կիրառելիս օրինականություն ապահովելու, վարչական իրավախախտումները հանցագործություններից և կարգապահական իրավախախտումներից սահմանազատելու համար:

Օրենսդիրը չի ստեղծում զանցանքների նշաններ, այլ միայն ընտրում է էական տարբերակիչ հատկություններ: Վարչական իրավախախտումների մասին օրենսդրությունը չունի «վարչական իրավախախտման կազմ» հասկացությունը, սակայն առկա է իրավանորմ, ըստ որի՝ վարչական իրավախախտման կազմի բացակայությունը հիմք է հանդիսանում վարչական իրավախախտման գործի վարույթը կարճելու համար: Վարչական և իրավական գրականության մեջ առանձնանում են չորս տարրեր, որոնք ներկայացնում են վարչական իրավախախտման իրավական կազմը՝ օբյեկտ, օբյեկտիվ կողմ, սուբյեկտ, սուբյեկտիվ կողմ: Այս տարրերը կառուցված են իրավախախտման համար և բնութագրում են ֆիզիկական կամ իրավաբանական անձի գործողության կամ անգործության իրավական որակավորման գործընթացը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վարչական իրավախախտման զանցակազմի տարրերին, արձանագրել է, որ «վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի շրջանակներում վարչական մարմինը պարտավոր է պարզել տվյալ վարչական զանցակազմի չորս բաղկացուցիչ մասերի (տարրերի)՝ վարչական զանցանքի (հակաիրավական վարք) օբյեկտի, վարչական զանցանքի օբյեկտիվ կողմի (զանցանքի բովանդակություն), վարչական զանցանքի սուբյեկտի (ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, պաշտոնատար անձ) և վարչական զանցանքի սուբյեկտիվ կողմի (իրավահարաբերության սուբյեկտի հոգեկան զգացական կարգավիճակ) միաժամանակյա առկա-

յությունը, քանի որ նշված տարրերից որևէ մեկի բացակայությունը բացառում է վարչական զանցակազմի գոյությունը»¹:

Միաժամանակ, կարևոր է արձանագրել, որ գործող օրենսդրությունը վարչական իրավախախտում չի դիտում միայն այն արարքը, որն առաջացնում է քրեական պատասխանատվություն, սակայն վարչական իրավախախտում չի կարելի որակել նաև այն արարքները, որոնք իրենց էությամբ կարող են առաջացնել նաև ֆինանսական կամ կարգապահական պատասխանատվություն:

Վարչական իրավախախտումը վարչական պատասխանատվության հիմքն է²:

Ֆինանսական պատասխանատվությունն էության մեջ կարելի է քննարկել հարկային կամ մաքսային ոլորտում առկա պատասխանատվության միջոցները:

Անդրադառնալով կարգապահական պատասխանատվության հետ կապված հարցադրմանը՝ հարկ է արձանագրել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 15-րդ հոդվածն ուղղակի կերպով նախատեսում է, որ կոնկրետ սուբյեկտների կողմից վարչական պատասխանատվություն նախատեսող արարք կատարելու համար վերջիններիս նկատմամբ կիրառվում է կարգապահական պատասխանատվություն: Նման իրավանորմի առկայությունն ու դրա բովանդակությունն ինքնին վկայում են այն մասին, որ վարչական իրավախախտում չի կարող որակվել նաև այն արարքը, որի համար նույն օրենսգրքով նախատեսված է կարգապահական պատասխանատվության կիրառում:

Վերոգրյալ դիտարկումների համատեքստում հարկ է նշել, որ վարչական իրավախախտմանը բնորոշ են հետևյալ ընդհանրական հատկանիշները.

ա) արարքը, որը կարող է որակվել որպես վարչական իրավախախտում, պետք է ունենա ոտնձգության տարր, և այն պետք է ուղղված լինի հասարակական և պետական կարգի, հասարակական և պետական անվտանգության, մարդու իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ,

բ) արարքը, որով դրսևորվում է ոտնձգությունը, պետք է լինի հակաօրինական, այսինքն՝ պետք է առկա լինի անօրինականության

¹ Տե՛ս թիվ ՎԴ/6382/03/20 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.12.2023 թվականի որոշումը:

² Տե՛ս ՀՀ վարչական իրավունք: Ոստմնական ձեռնարկ, ընդհանուր խմբագրությամբ՝ **Գ. Դանիելյանի**: Երևանի պետական համալսարան, 2012, 467 էջ:

հատկանիշը՝ արարք կամ անգործություն, որն արգելված է կամ պարտադիր կատարման ենթակա է օրենքով,

գ) արարքը վարչական իրավախախտում որակելու համար պետք է կատարված լինի մեղավորությամբ, այսինքն՝ պետք է առկա լինի մեղավորությամբ դրսևորված դիտավորյալ կամ անզգույշ հակաիրավական վարքագիծ,

դ) արարքը կարող է որակվել որպես վարչական իրավախախտում միայն այն դեպքում, երբ որպես իրավախախտում նախատեսված է համապատասխան իրավական ակտում, ընդ որում՝ վարչական պատասխանատվություն սահմանող նորմը չի կարող սահմանվել ենթաօրենսդրական ակտով,

ե) արարքը պետք է ունենա հանրային վտանգավորություն,

զ) վարչական իրավախախտումը պետական հարկադրանքի տրամաբանության ներքո ենթակա է կանխարգելման կամ պատժման,

է) իր էությամբ չի առաջացնում այլ տեսակի պատասխանատվություն, մասնավորապես՝ քրեական, ֆինանսական (հարկային կամ մաքսային) կամ վարչական պատասխանատվություն նախատեսող իրավական ակտով սահմանված դեպքերում կարգապահական պատասխանատվություն:

Ամփոփելով՝ անհրաժեշտ է արձանագրել, որ վարչական իրավախախտման հետևանքը վարչական պատասխանատվությունն է, հետևաբար յուրաքանչյուր իրավախախտում կատարած անձ, որը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության, պարտավոր է գիտակցել, որ իր օբյեկտիվ իրականությունում դրսևորած որոշակի կոնկրետ վարքագծի համար իր իրավունքներն այս կամ այն կերպ կարող են սահմանափակվել կամ իր վրա կարող է դրվել որոշակի պարտականություն, անկախ այն հանգամանքից, թե դրսևորված հակաիրավական վարքագիծն ինչ բնույթի հասարակական հարաբերություններ է խաթարել և արդյոք վնասել է այլ անձանց:

Եզրակացություն

Ջանքանքը՝ որպես հանրային վտանգավոր արարք, թեև ունի առավել նվազ վտանգավորության մակարդակ, քան հանցանքն է, սակայն իր ծավալով առավել ընդգրկուն է և շոշափում է ավելի շատ հասարակական հարաբերություններ: Ընդ որում, վարչական պատասխանատվություն կիրառելու վերաբերյալ վարչական ակտերը հանդիսանում են միջամտող վարչական ակտերը, որպիսի հանգամանքով պայմանավորված՝ այդ իրավահարաբերությունների շրջանակներում անձանց իրավունքների

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՈՎՈՒՄ 1(113)2024

պաշտպանության երաշխավորման, օրինականության սկզբունքի կիրառելիության, իրավունքի գերակայության ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է հնարավորինս որոշակի (որոշակիության սկզբունքի պահպանմամբ) իրավական կանոնակարգումների ստեղծումը, որով կբացառվի իրավական չհիմնավորված երկակիությունը և անձանց մոտ կձևավորի վստահություն օրենքի նկատմամբ:

Հենց այս դիտարկման լույսի ներքո անհրաժեշտ է կատարել հետևյալ եզրահանգումները.

1) Թեև ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածն անմեղության կանխավարկածի սկզբունքն ուղղակիորեն կապում է հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձի հետ, սակայն անմեղության կանխավարկածը գործում է հանրային պատասխանատվության ոլորտում և պայմանավորված տվյալ արարքի բնույթով, նախատեսված պատասխանատվության տեսակներով ու խստությամբ՝ կարող է կիրառվել նաև վարչական պատասխանատվության վարույթների նկատմամբ:

2) Վարչական պատասխանատվության ոլորտում անմեղության կանխավարկածի ինստիտուտն անհրաժեշտ է կապել ոչ թե վարչական պատասխանատվություն կիրառելու վերաբերյալ վարչական ակտի անբողոքարկելի դառնալու հետ, այլ վարչական ակտի իրավաբանական ուժ ստանալու հետ: Նման իրավիճակում, վարչական պատասխանատվության ոլորտում անձը համարվում է անմեղ, քանի դեռ «Վարչական տույժ նշանակելու մասին» վարչական ակտը չի մտել ուժի մեջ:

3) Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության զարգացման միտումը ցույց է տալիս, որ վարչական իրավախախտումների համար պատժամիջոցները խստացվում են, ինչը նպաստում է վարչական իրավախախտումների և քրեական հանցագործությունների համար հասարակական վտանգի ընկալման սահմանների քայքայմանը:

4) Վերոգրյալ հատկանիշների և դատողությունների տրամաբանության ներքո ամփոփելով ամբողջ վերոգրյալ տեսակետները, իրավական դատողությունները, բացահայտելով վարչական իրավախախտման հասկացության էությունը, ինչպես նաև առաջնորդվելով Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի անդամ երկրների լավ կառավարման վերաբերյալ այն առաջարկությամբ, ըստ որի՝ արդյունավետ վարչարարությունը պետք է ապահովվի օրենսդրության որակով, որը պետք է լինի պատշաճ և հետևողական, պարզ, հեշտ հասկանալի և մատչելի՝ սույն աշխատանքով հիմնավորվում է վարչական իրավախախտման այն հեղինակային հասկացությունը, ըստ որի՝ վարչական իրավախախտումը հակաօրինական, մեղավոր, հանրային վտանգավոր, կանխարգելման

կամ պատժման ենթակա այնպիսի ոտնձգություն է, որը որպես վարչական իրավախախտում նախատեսված է համապատասխան օրենսդրական ակտում և որի համար նախատեսված չէ քրեական, ֆինանսական, ինչպես նաև վարչական պատասխանատվություն նախատեսող իրավական ակտով սահմանված դեպքերում՝ նաև կարգապահական պատասխանատվություն:

5) Այն իրավախախտումների պարագայում, որոնց համար գործող օրենսդրությունը նախատեսում է առավել խիստ պատասխանատվության միջոց առաջին անգամ վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո նույն արարքը շարունակելու համար, վարչական մարմինը կրկնակի պատասխանատվության միջոցը պետք է կապի առաջին վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի, այլ ոչ վարչական ակտի անբողոքարկելիության հետ, քանի դեռ այն օրենքով սահմանված կարգով վերացված կամ ոչ իրավաչափ ճանաչված չէ, իսկ վարչական ակտն իրավաչափ է, քանի դեռ օրենքով սահմանված կարգով անվավեր կամ ոչ իրավաչափ ճանաչված չէ:

6) Վարչական իրավախախտումը պետության և հասարակության կողմից անցանկալի որակվող վարքագիծն է, իսկ վարչական պատասխանատվությունը՝ պետության արձագանքն իր համար անցանկալի վարքագծին, որպիսի պայմաններում քննարկված երկու ինստիտուտներն ունեն շղթայական կապ և ուղղակի կապի մեջ են միմյանց հետ:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն՝ ընդունված 05.07.1995 թ. (2015 թվականի փոփոխություններով):
2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 18.02.2004 թվականին:
3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք՝ ընդունված 06.12.1985 թվականին:
4. «Վարչական վարույթի մասին» Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենք (Verwaltungsverfahrensgesetz)՝ ընդունված 25.05.1976 թվականին:
5. «Վարչական իրավախախտումների մասին» Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենք՝ ընդունված 24.05.1968 թվականին:

ՍԱՀՄԱՆԱՐԴՐՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ 1(113)2024

6. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսգիրք՝ ընդունված 20.12.2001 թվականին:

7. «Քրեական համակարգում փոփոխությունների մասին» Իտալիայի Հանրապետության օրենք՝ ընդունված 24.11.1981 թվականին, https://www.bosettiegatti.eu/info/norme/statali/1981_0689.htm

8. «Պետական կառավարման մարմինների ընդհանուր վարչական վարույթների մասին» Իսպանիայի Թագավորության օրենք՝ ընդունված 01.10.2015 թվականին: Art. 37 (2), 47 The Common Administrative Procedure of the Public Administrations: Law 39. 2015, October 1. URL: <https://afyonluoglu.org/PublicWebFiles/Reports/PDP/2015%20Spain-Law%2039-2015%20Common%20Administrative%20Procedure%20of%20PA.pdf>

9. ՀՀ Սահմանադրական դատարանի 22.09.2009 թվականի թիվ ՍԴՈ-832 որոշում:

10. ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական գործով 22.12.2023 թվականի թիվ ՎԴ/6382/03/20 որոշում:

11. **Թովմասյան Հ., Լուխթերհանդթ Օ., Մուրադյան Գ., Պողոսյան Վ., Ռիսայաներս Վ., Ռուբել Ռ.**, ՀՀ ընդհանուր վարչական իրավունք: Երևան. «Բավիղ», 2011, 421 էջ:

12. ՀՀ վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Դանիելյանի: Երևանի պետական համալսարան, 2012, 704 էջ:

13. Պետության և իրավունքի տեսություն: Հեղ. խումբ, գիտ. խմբ՝ **Ա Ղամբարյան, Մ. Մուրադյան:** Երևան. «Լուսաբաց» հրատարակչություն, 2014, 692 էջ:

14. **Սմբատյան Ջ.** Վարչական իրավախախտման, վարչական պատասխանատվության և վարչական պատժի ինստիտուտների հարաբերակցության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Երևան. «Լիմուշ», 2024, 78 էջ:

15. **Սմբատյան Ջ.** Վարչական ակտի արդյունավետության գնահատման տեսական և գործնական վերլուծություն: Երևան, 2023, 168 էջ:

16. **Augusto Durán Martínez**, La presunción de legitimidad del acto administrativo. Un mito innecesario y pernicioso universidad católica. 2007, էջեր 119-151,

<https://revistas.ucu.edu.uy/index.php/revistadederecho/article/view/848/851>

17. Административная ответственность: Учебное пособие. – Оренбург: Оренбургский институт (филиал) Университета имени О.Е. Кутафина (МГЮА), 2018. – 134 с.

18. Пуделька Йорг. Сравнительный анализ гражданско-процессуального и административно-процессуального права // Ежегодник публичного права – 2014. Административное право: сравнительно-правовые подходы. - М., 2014. - С. 453.

19. Recommendation CM/Rec(2007)7 of the Committee of Ministers to member states on good administration.

АДМИНИСТРАТИВНОЕ ПРАВОНАРУШЕНИЕ КАК РЕЗУЛЬТАТ ПРОЯВЛЕНИЯ ПРОТИВОПРАВНОГО ПОВЕДЕНИЯ И ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ЕГО ВОСПРИЯТИЯ

Аннотация

В статье рассматривается административное правонарушение как результат проявления противоправного поведения и основные проблемы его восприятия.

С учетом вышеизложенного, предметом исследования в рамках статьи являются правовая доктрина, правовые акты разных стран относительно содержания исследования и судебная практика их применения.

Целью настоящей статьи является закрепление на основании правового исследования единых суждений об институте презумпции невиновности в сфере административной ответственности, понятия административного правонарушения, презумпции правомерности административного акта, о цепной связи институтов административного правонарушения и административной ответственности, а также на основе теоретического и практического опыта внедрение наиболее эффективных и характерных регулирований в систему законодательных регулирований Республики Армения.

В статье рассматриваются вопросы, которые в той или иной мере нашли отражение в работах различных авторов, однако проблемы, встающие перед рассматриваемым в статье институтом, не были предметом отдельного комплексного научного исследования и правового анализа, что и было сделано в настоящей работе.

Данная работа представляет собой системное и расширенное исследование действующих регулирований в сфере административных

правонарушений, в котором наиболее детально и полно рассматривается институт административного правонарушения, его соотношение с преступлением, разграничение преступления и проступка, административная ответственность как следствие административного правонарушения и их цепная связь, презумпция правомерности административного акта как условие применения административной ответственности за продолжающееся правонарушение.

Ключевые слова: административное правонарушение, административная ответственность, проступок, презумпция невиновности, преступление, противоправность, норма.

ADMINISTRATIVE OFFENSE AS THE RESULT OF THE MANIFESTATION OF ILLEGAL BEHAVIOR AND THE MAIN PROBLEMS OF ITS PERCEPTION

Annotation

The article discusses the administrative offense as the result of the manifestation of illegal behavior and the main problems of its perception. In view of the above, the legal doctrine and the legal acts of different countries related to the content of the study, as well as the judicial practice of their application are the subject of the study within the framework of this research.

The purpose of this article is to establish, on the basis of legal research, unified judgments in the field of administrative responsibility about the institution of the presumption of innocence, the concept of the administrative offense, the presumption of legality of the administrative act, the chain connection between the institutions of administrative offense and administrative responsibility, as well as on the basis of theoretical and practical experience to fix the most effective and characteristic norms in the current legislative field of the Republic of Armenia.

The article considers issues that have been reflected to a greater or lesser extent in the works of various authors, but have not been the subject of a separate comprehensive scientific discussion and legal analysis regarding the

problems facing the institution that constitutes the content of the topic, which was done in this paper.

This work is a systematic and spatial research of the existing regulations in the field of administrative offense, through which the institution of administrative offense, its correlation with crime, the boundary of the relationship between crime and misdemeanor, administrative responsibility as a consequence of an administrative offense and their chain connection, the presumption of the legality of an administrative act as a condition for the application of administrative responsibility for a continuing offense are examined in more detail and fully.

Keywords: administrative offense, administrative responsibility, misdemeanor, presumption of innocence, crime, illegality, norm.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 13.03.2024 թ., տրվել է գրախոսության 14.03.2024 թ., ընդունվել է տպագրության 24.03.2024 թ.:

